

Նա ոտքի կանգնեց, ձեռքին բաժակի ձև տալով շուռ
տուաւ գլխիս և ասաց. մկրտի ծառայս Աստուծոյ ի նոր գրա-
կան անուն «Մախլաս»:

—Պ. Արգար, այդ ի՞նչ անուն է:

—Այդ իս հին ահունն է. թէև ինձ պէտք չէ և մի բէջ
հնացած, բայց ընդունիր:

Արգարի հինը շատ նորերից նոր է ու կմնայ և ես ուրախ
ուրախ վեր թուայ տեղիցս ու գրիչս թախախելով՝ ստորագրեցի

ՄԱԽԼԱՍ

Աղաղարօապար եւ Ս. Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են
զից ու էջմ. միարան Բարդուղիմէոս եղ. Գէորգեան:

Այս փոքրիկ գրքոյկը, որ սրբազն եպիսկոպոսը հրատա-
րակել է ուստերէն թարգմանութեամբ հանդերձ, բացի մասնա-
գիտական հետաքրքրութիւն ունենալուց՝ արժանի է ուշադրու-
թեան և այն զօրեղ բողոքի շնորհիւ, որ հեղինակը բարձրաց-
րել է «Մշակ» լրագրի և Խաչիկ վարդապետ Դատեանի թեթևա-
միտ և անմիտ վերաբերմունքի դէմ դէպի էջմիածինը: Խնդիրը
նրանումն է, որ մի քանի տարի առաջ էջմիածինի մօտ պեղում-
ներ կատարուեցին և գետնի տակից դուրս եկան ահազին շի-
նութիւնների հիմքեր և քարէ սիւներ ու զանազն առարկա-
ներ. Գեր. Բարդ. եպիսկոպոսը կարծիք յայտնեց, թէ այդ հնու-
թիւնները հին հայոց կուսական մի մեհեանի տեղ յետա-
գայում շինուած Զուարթնոց եկեղեցու հետքեր են: Խաչիկ վար-
դապետը, որ ի հարկէ ոչ մի ձեռնհասութիւն չունի դատելու
այս խնդրի մասին, լուրեր էր տարածում, որ գանուած շինու-
թիւնները հին էջմիածնի տաճարն է: Այսպիսի գայթակղեցու-
ցիչ վարմունքի դէմ է բողոքում հեղինակը: Ցաւալի է իհարկէ
որ էջմիածնի Սիսոդն և պատշաճաւոր իշխանութիւնը իւր
ժամանակին դրական միջոցներ չէին ձեռք առել զսպելու այդ-
պիսի ոտնձգութիւնները:

ՀՆԹԵՐՑՈՂ

Իմ պատասխանը պ. Գ. Ենգիբարեանին

«Հումայում» տպուած պ. Գար. Ենգիբարեանի մատենա-
գրական յօդուածը իմ հայերէնից ուստերէն լիակատար բառա-
բանի մասին *) կարդացի մեծ հետաքրքրութեամբ: Պ. Ենգիբա-

*) «Հումայ» 1905 թ. մարտ, եր. 120—125: